# Արձանագրություն N 3

## ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան « 12» «02» 2026թ. Ժամը 15:00

Մասնակցում էին՝

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության պետի տեղակալ Տ. Բաբայանը -հանձնաժողովի նախագահ,

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության հանդերձանքի ապահովման բաժնի պետի պարտականությունները կատարող Դ. Սայադյանը -գնահատող անդամ,

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության հանդերձանքի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Ջ. Տիգրանյան-գնահատող անդամ,

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյան-հանձնաժողովի քարտուղար

**Օրակարգ՝**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ծածկագրով գնահատման նիստը հետաձգվել էր հայտերի ուսումնասիրման և գնահատման համար.

1. **Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակիցների ներկայացրած հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում են որպես վավեր և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը:

2. **Տվյալներ հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին.**

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ծածկագրով գնման ընթացակարգերի հայտերն,որոնց մեջ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները և ենթակա են շտկման.

Մասնավորապես՝

1.«Գորգանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1-ում՝, Հավելված 1.3-ում բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը, իսկ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի կայքէջի հղումը կցված է, սակայն չի բացվում ամբողջական տեղեկատվությունը, ինչպես նաև ամբողջությամբ բացակայում է տեխնիկական բնութագիրը՝ ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը:

2. «Իլիկ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուի կայքէջի հղումը:

3. «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացված տեխնիկական բնութագրում՝ անհրաժեշտ է հստակեցնել ֆիրմային անվանումը և արտադրողի անվանումը:

4.«Արա Սահակյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ մասնավորապես՝ բացակայում է տեխնիկական բնութագրում՝ ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՁԲ-2026/Է-7 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստը կասեցվում է 1 աշխատանքային օրով և առաջարկվում է

«Գորգանի» ՍՊԸ-ին, «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին, «Արա Սահակյան» ԱՁ-ին և «Իլիկ Գրուպ» ՍՊԸ 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

**Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :**

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Բաբայան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Սայադյան

Ջ. Տիգրանյան

Քարտուղար՝ Է. Մնացականյան